

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 5 Յուլիս. 08.- Արքեպիսկոպոսի Ներսէսի Հայրապետին Մերոյ եւ Թաղայ եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Արաջանեան:

Կիր. 6 Յուլիս. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսացեալ էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Ուր. 11 Յուլիս. 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսացեալն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շր. 12 Յուլիս. 08.- Գիւտ Նշխարաց Արքեպիսկոպոսի Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 13 Յուլիս. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Դշ. 16 Յուլիս. 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսացեալն էր Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Եշ. 17 Յուլիս. 08.- Արքեպիսկոպոսի Պարգմանչաց Վարդապետացն Մերոյ Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր Թարգմանչաց Երկ. Վարժարանի Տեսուչ՝ Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Շր. 19 Յուլիս. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան: Կէսօրէ ետք, հախատօնակին հանդիսացեալն էր Լուսարարապետ Արքեպիսկոպոսը:

Կիր. 20 Յուլիս. 08.- Գիւտ Տփայ Ս. Աստուածածնին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Հանդիսացեալն էր Լուսարարապետ Արքեպիսկոպոսը: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Ուր. 25 Յուլիս. 08.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսացեալն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շր. 26 Յուլիս. 08.- Երկուտասան Առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Թաղէոս Վրդ. Զիրեկեան:

Կիր. 27 Յուլիս. 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսացեալն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Ուր. 1 Օգոստոս 08.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսացեալն էր Լուսարարապետ Արքեպիսկոպոսը:

Շր. 2 Օգոստոս 08.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Տ. Եղիշէ Արդ. Դաւթեան: Կէսօրէ ետք, Այլակերպութեան մեծահանգէս հախատօնակին եւ Տեսուչը Յակոբոս Առաքելի յիշատակի հանդէսին հանդիսացեալն էր Լուսարարապետ Արքեպիսկոպոսը: Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»-ի եւ «Հսկման» կարգերուն հանդիսացեալն էր Լուսարարապետ Արքեպիսկոպոսը:

Կիր. 3 Օգոստոս 08.- Վարդապետ: Տօն Այլակերպութեան Տեսուչն Մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսացեալն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեալն էր քարոզիչ Լուսարարապետ Արքեպիսկոպոսը: Սպասարկող վարդապետներն էին Տ. Շնորհի Արդ. Պալոյեան եւ Տ. Եղիշէ Արդ. Դաւթեան:

Բշ. 4 Օգոստոս 08.- Յիշատակ Մեռելաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Եղիշէ Արդ. Դաւթեան:

Ուր. 8 Օգոստոս 08.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսացեալն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շր. 9 Օգոստոս 08.- Թաղէոսի Առաքելոյն եւ Սանդիստայ Կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 10 Օգոստոս 08.- Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 16 Օգոստոս 08.- Արքեպն Որդւոց եւ Թոռանց Արքայն Գրիգորի Լուսաւորչին Մերայ՝ Արիստակիսի. Վրքանիսի. Յուսկանն. Գրիգորիսի եւ Դանիէլի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Կիր. 17 Օգոստոս 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասի մէջ՝ Ս. Յովհաննու Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրնէքեան: Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Արքազանը կատարեց «Թաղողօրհնէփ» արարողութիւնը:

Բշ. 18 Օգոստոս 08.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման Տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ:

Շր. 23 Օգոստոս 08.- Տօն Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու Հարիւր Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածամօր Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 24 Օգոստոս 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Արքազանը: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Ուր. 29 Օգոստոս 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շր. 30 Օգոստոս 08.- Տօն Շոգակաթի Ս. Էջմիածնի: Ժամարարն էր Տ. Կորին Արդ. Բաղդասարեան: Կէսօրէ ետք, Լուսարարապետ Արքազան Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրերը ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիր. 31 Օգոստոս 08.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Արիս Արք. Շիրվանեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրերը ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետեց պատարագիչ Արքազանը:

Բշ. 1 Սեպտեմբեր 08.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Արդ. Ալէքեան:

Շր. 6 Սեպտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէքեան:

Կիր. 7 Սեպտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տաճարին Տեսուչը Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Բշ. 8 Սեպտեմբեր 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Գշ. 9 Սեպտեմբեր 08.- Տօն Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Համարածում Վրդ. Քէշիշեան: Ժամարարն էր Տաճարին Տեսուչը Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան:

Շր. 13 Սեպտեմբեր 08.- Տօն Արքեպն Առաքելոցն՝ Թովմայի. Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Կիր. 14 Սեպտեմբեր 08.- Տօն Գիւտ Գօտույն Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Տիրամօր Գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Ուր. 19 Սեպտեմբեր 08.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շր. 20 Սեպտեմբեր 08.- Մեռելոց Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Տ. Արիս Արք. Շիրվանեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրերը ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը, «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան: Կատարուեցաւ «Գոհարանական Մաղբանգ» Հայաստանի Հանրապետութեան Ժէ. տարեդարձին առթիւ: Հանդիսապետեց Պատարագիչ Արքազանը:

Կիր. 21 Սեպտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան

Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Ս. Թադէոս Վրդ. Զիրեկեանց:

Եր. 27 Սեպտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Ս. Թեոդորոս Վրդ. Զաքարեան: Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին հանդիսապետեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Ապա Կենաց Փայտի մատուցեց Ս. Գլխաղիրի մատուցէն առնելով փոխադրեց Աւագ Խորան: Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք» ի եւ «Հրկման» կարգերուն հանդիսապետեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիր. 28 Սեպտեմբեր 08.- Տօն Վերացման Ս. Խաչին: Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետութեամբ Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ փարփեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Կէսօրէ ետք, Խաչվերացի մեծահանդէս «Անդաստանին» հանդիսապետեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Բշ. 29 Սեպտեմբեր 08.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Ս. Նորայր Արք. Գազազեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ՝ հոգւոցն Մելգոնեան հարազատաց՝ Կարապետի եւ Գրիգորի, Բարեբարաց Ազգիս եւ Ս. Արոտոյս: Հանդիսապետեց Ս. Արիս Արք. Երվանդեան:

Եր. 4 Հոկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Նշան: Ժամարարն էր Ս. Եղիշէ Արք. Դաւթեան:

Կիր. 5 Հոկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուբին, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուր. 10 Հոկտեմբեր 08.- Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Արք. Երվանդեան:

Եր. 11 Հոկտեմբեր 08.- Տօն Ս. Գեորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Արք. Երվանդեան: Ժամարարը եւ փարփիչն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Զարուբեան Տաճար, ուր մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր քափօր Տաճարէն ներս: Թափօրա-

պետն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 12 Հոկտեմբեր 08.- Տօն Վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Զարուբին, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Լուսարարապետ Սրբազան Հօր պաշտօնական երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ փարփեց Լուսարարապետ Սրբազանը:

Եր. 18 Հոկտեմբեր 08.- Աբղոց Եօթանասուն եւ երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին զաւիթին մէջ գտնուող Ս. Գեորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Էմմանուէլ Վրդ. Արաքանեան:

Կիր. 19 Հոկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Արք. Երվանդեան: Ժամարարը եւ փարփիչն էր Ս. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Զօրհնէքի յատուկ արարողութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բերուած նորօրհնեալ Սրբալոյս Միւռոնով՝ հանդիսապետութեամբ Ս. Արիս Արք. Երվանդեան:

Ուր. 24 Հոկտեմբեր 08.- Նախատօնակին ի Ս. Զակարի հանդիսապետեց Ս. Արիս Արք. Երվանդեան:

Եր. 25 Հոկտեմբեր 08.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն Մերոց (Տօն Ազգային եւ եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Ս. Նորայր Արք. Գազազեան: «Հայր մեր»էն առաջ փարփեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիր. 26 Հոկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուբին, մեր Վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Ս. Թադէոս Վրդ. Զիրեկեանց:

Եր. 1 Նոյեմբեր 08.- Աբղոց Զօրից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Զարուբեան Տաճարի շրջափակի Ս. Յովհաննու մատուռին մէջ: Հանդիսապետն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ժամարարն էր Ս. Թեոդորոս Վրդ. Զաքարեան:

Կիր. 2 Նոյեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Նորայր Արք. Գազազեան:

Բշ. 3 Նոյեմբեր 08.- Ա. Զովսեփայ Աստուածածին: Ըստ սովորութեան Գերսեմանիի Ա. Աստուածածնայ Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան, պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզման մատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 8 Նոյեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Նղիշէ Արդ. Դաւթեան: Կէսօրէ ետք, Տ. Արիս Արք. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ա. Յարութեան Տաճար: Ա. Գերեզմանի եւ Խաչ Գիւտի ուխտ կատարելէն ետք, վերջնոյս կից Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաֆարեան:

Կիր. 9 Նոյեմբեր 08.- Տօն Գիւտ Խաչի: Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ա. Յարութիւն, Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Դարիպեան: Տ. Արիս Արք. Շիրվանեանի երկրորդ մուտքէն ետք, Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ա. Պատարագ: Ժամարարն էր Տ. Շնորհ Արդ. Պալոյեան: Պատարագի աւարտին, Միաբանութիւնը թափօրով առաջացաւ դէպի Ա. Գերեզմանը Արիս Արք. Շիրվանեանի հանդիսապետութեամբ: Ա. Գերեզմանին շուրջ երկրորդ անգամ դառնալու պահին, իրաւական խնդրով ընդհարում տեղի ունեցաւ Յոյն կղերներու հետ: Ոստիկաններու միջամտութեամբ արարողութիւնը այստեղ աւարտեցաւ:

Շր. 15 Նոյեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր Վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Արաքանեան:

Ուր. 21 Նոյեմբեր 08.- Նախատօնակը պաշտուեցաւ Ա. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Շր. 22 Նոյեմբեր 08.- Տօն Ա. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը եւ Ա. Պատարագը կատարուեցան Ա. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր եկեղեցւոյ Տեսուչը՝ Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, Ա. Արքողոյ քարերարուի Աղաւնի Ճէվահիրեանի

եւ պարագայից հոգիներուն ի հանգիստ՝ հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Դարիպեանի:

Կիր. 23 Նոյեմբեր 08.- Դարձեալ Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Ընծանրէր Վրդ. Բարախանեան:

Շր. 29 Նոյեմբեր 08.- Արքեպ. Առաքելոսն՝ Անդրէի եւ Փիլիպպոսի: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 30 Նոյեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր Վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Դշ. 3 Դեկտեմբեր 08.- Նախատօնակին ի Ա. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Եշ. 4 Դեկտեմբեր 08.- Ընծայումն Ա. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Արիս Արք. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ա. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ա. Պատարագը Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Արիս Արք. Շիրվանեան: Իսկ յետ Պատարագի Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան հանդիսապետեց քարերար Կիւլապի Կիւլպէնկեան գերդաստանի համար կատարուած Հոգեհանգստեան պաշտօնին:

Շր. 6 Դեկտեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Արդ. Ալէքեան:

Կիր. 7 Դեկտեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ա. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կիրիլ Բեկ. Տայեան: Ա. Պատարագէն ետք կատարուեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտօն ի յիշտակ 1988 թուի Հայաստանի աղէտաբեր երկրաշարժի համայն զոհերուն՝ հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Ուր. 12 Դեկտեմբեր 08.- Նախատօնակին ի Ա. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 13 Դեկտեմբեր 08.- Առաքելոսն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

Կիր. 14 Դեկտեմբեր 08.- Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն մեր Վերնատան

մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Թադէոս Վրդ. Զիրիկեանց:

Եր. 20 Դեկտեմբեր 08.- Արքայն նիկեդայոսի Միւռայ Սեանչելագործ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մինասի մատարան մէջ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

Կիր. 21 Դեկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեան: Նախատօնակին ի Ս. Զակոր հանդիսապետեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Բշ. 22 Դեկտեմբեր 08.- Բղաքին Ա. Աստուածածնին ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միարան Հայրեր ինճնաշարժերով իջան Գերսե-

մանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ Բարոզեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուր. 27 Դեկտեմբեր 08.- Նախատօնակին ի Ս. Զակոր հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Եր. 28 Դեկտեմբեր 08.- Ա. Զակորայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Վերաբերումը կատարուեցաւ Մայր Տաճարի փոքր ատենանին մէջ Սուրբին նկարով կառուցուած շարժական Սեղանին վրայ:

Կիր. 29 Դեկտեմբեր 08.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարուիւն մեր Վերնատան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Նիկիշէ Արդ. Դարբեան:

ԼԱՏԻՆԱՅ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԱՅՅԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

2008 թուականի յուլիս 10-ին՝ հիկզաբթի, հետեւելով Երուսաղէմի մէջ ընկալեալ աւանդութեանը՝ Հայոց Պատրիարքարան այցելեց Լատինաց նորանշանակ Պատրիարք Ամեն. Տ. Ֆուադ Թուալ՝ ուղեկցութեամբ Լատինաց Միաբանութեան հայրերու:

Վանքի աւագ դրան մօտ Պատրիարքին դիմաւորեցին Լուսարարապետ Սրբազան Հայրն ու Աւագ Թարգմանը եւ առաջնորդեցին հիւրերը դէպի Սրբոց Զակորեանց Մայր Տաճար, ուր Պատրիարք Սրբազանը ծանօթացաւ եկեղեցիին եւ ստացաւ հակիրճ բացատրութիւն տաճարի մասին Լուսարարապետ Սրբազանէն:

Ապա հիւրերը առաջնորդուեցան դէպի Պատրիարքարանի ընդունելութեան սրահ, ուր նորանշանակ Պատրիարք Սրբազանին դիմաւորեցին Ամեն. Տ. Թորգոմ Սրբազան Հայրը եւ Միաբանութեան Սրբազան եւ Վարդապետ հայրերը:

Կարճ հիւրասիրութենէ յետոյ, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ամեն. Թորգոմ Սրբազան Հայրը, որ շնորհաւորեց Ամեն. Տ. Ֆուադ Թուալը՝ իր նոր պատասխանատու պաշտօնին նշանակուելու առթիւ եւ մաղթեց անոր արդիւնաշատ եւ ձեռքբերումներով լի պաշտօնավարման շրջան: Այնուհետեւ, պատասխան ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Լատինաց նորանշանակ Պատրիարքը, որ իր խօսքի մէջ նախ շնորհակալութիւն յայտնեց Պատրիարք Սրբազան Հօրը ջերմ ընդունելութեան համար եւ վստահեցուց, որ իր պաշտօնավարման շրջանին ալ պիտի շարունակուի երկու Պատրիարքարաններու միջեւ արդէն առկայ արդիւնաւետ փոխարաբերութիւններն ու համագործակցութիւնը, որպէսզի Սուրբ Երկրի մէջ ալ աւելի ամրանայ քրիստոնէական միութիւնը եւ փոխըմբռնումը:

Հանդիպումը աւարտուեցաւ խմբային լուսանկարով եւ հրաժեշտի ողջագոյրմամբ: